Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի Արթուր Վանոյանի անվան թիվ 6 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (3 դասաժամ) թափուր տեղի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումը անցկացվում է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև1),

2) Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3) Անձնագրի պատճենը,

4) Ինքնակենսագրություն (Ձև4),

5) Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6) Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10^{00}-ից մինչև 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 14^{00}-ին, ՀՀ Կոտայքի մարզի, Աբովյանի Արթուր Վանոյանի անվան թիվ 6 ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Աբովյան Սարալանջի 1: Տեղեկությունների համար զանգահարել 077-03-61-15 հեռախոսահամարով: